

ղէմի նախորդ ելեմտից տեսուչ տ. Ղևոնդ վարդապետ Մաքսուտեանին, որպէս զի մատուցանի թէ վանական մատակարարութեան վերջին երկու տարուայ հաշուեցուցակները և թէ կալուածական շինուածքները, գնումները և վաճառումները հաշիւները:

Բիւզանդիոնում կարգում ենք. —

Ս. Էջմիածնի միաբաններից տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուտեան, որ Թաւրիզ կը գտնուի, նամակով խնդրել է ո. Պատարիարքից, որ Մարտիրոյ հոգևոր հովուութեան պաշտօնն իրեն յանձնուի: Մեսրոպ վարդապետ վերջերս Ղարաբաղ գաւառի առաջնորդական փոխանորդութիւնը կը վարէր:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱԽՈՍԼԱԻ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԸՅ

Церк. Вѣстникъ-ում կարգում ենք.

Պետութեան մէջ խղճի կատարեալ ազատութիւն յայտարարելուց յետոյ պրաւօսլաւ հովուապետներն ու հովիւները գործ կ'ունենան իրենց հօտի վրայ այնպիսի ազդեցութեանց հետ, որպիսիք ց'այսօր նախատեսնել անգամ չէր կարելի: Տաւրիկեան նախկին եպիսկոպոս Նիկողոսը սուրբ Սաշ եկեղեցում քարոզից յետոյ ասել է հետեւեալը. —

Մի քանի շաբաթ սրանից առաջ Տաւրիկեան թերակղզու ընակիչները մէջ յայտնուեց Ամերիկայից եկած պրեսոփետերեան քարոզիչ Պետեր Եաստէր, որ Ամերիկայից գնում էր Պարսկաստան: Նա եկաւ Աւետարան քարոզելու և արդէն եղել էր Մելիտոպօլում, Աստրախանում և Նոյն իսկ Սիմֆէրոպօլում: Նա եկաւ և ինձ մօտ Խերսոնէս՝ ինձանից օրհնութիւն ստանալու այդ գործի համար: Երբ ես զարմացած հարցրի, թէ նա ի՞նչպէս պէտք է Աւետարան քարոզի պրաւօսլաւ քրիստոնեաներին, որոնց հազար տարի առաջ են Աւետարան քարոզել և այն էլ այստեղ՝ համարեա մկրտութեան աւազանին մօտ, նա բոլորովին

պաղարիւն կերպով պատասխանեց, որ յոյս ունի ընկնդիրներ գտնելու և պրաւօսլաւները մէջ: Ես, ի հարկէ, նորան օրհնութիւնս չբռուի:

— Վերոյիշեալ տողերից ընթերցողը տեսնում է, որ Նիկոզայոս սրբազանը զարմացել է ամերիկացու ցանկութեան վրայ և չի տուել նրան իւր օրհնութիւնը Աւետարանի քարոզչութեան համար Տաւրիկեան թերակղզու վրայ, ասելով, որ ընակիչները հազար տարի առաջ են դարձել քրիստոնէութեան: Եթէ նա տեղեկութիւն ունենար, կամ ցանկանար ծանօթանալ մեր երկրում կատարուածների հետ նախ քան խղճի փոքրիկ ազատութիւն տալը, կը տեսնէր, որ իւր ընկերակիցները օրհնութիւն էին տալիս ամեն մի կասկածելի փարաջաւորի քրիստոնէութիւն քարոզելու 1600 տարի առաջ քրիստոնեայ դարձածներին և զանազան կեղծ ու պատիւ խօստումներով պառակտումն և հաւատափոխութիւն մտցնում խեղճ դիւղացի ժողովրդի մէջ, թոյլ չք տալով հարազատ հովիւներին խրատելու և յետ կանգնեցնելու ազահութիւնից ստիպուած կրօնափոխութեան դիմել ցանկացողներին: Բայց ո՞ր լեզուն կարող է պատմել հացկատակների յանուն Աւետարանի կատարած ոճրագործութիւնները . . . :

Նոյն թերթի № 19-ում կարդում ենք. —

«Ապագայ եկեղեցի»

— Այդ ապագայ եկեղեցու մասին խօսում է Մերէթկովսկին իւր աշխատութեան մէջ՝ «Քրիստոս ու Նեոլ», որի վերջին մասը կազմում է «Պետրոս և Ալէքսէյ» անունով առանձին վէպը: Այստեղ հեղինակը փորձում է պարզել ընթերցողի առաջ մեր եկեղեցական կեանքում տեղի ունեցած այն փոփոխութեան միտքն ու նշանակութիւնը, որը տեղի ունեցաւ Ռուսաստանի բարենորոգիչ Պետրոս մեծի ժամանակ: Պետրոս մեծն ու նրա որդի արքայազուն Ալէքսէյ հանդիսանում են երկու հակառակ բեռներ, երկու իրար հակառակ աշխարհների ներկայացուցիչներ: արքայազուն Ալէքսէյ կողմնակից էր Մոսկովեան ուղղափառութեան, որն իւր ներքին կեանքում ազատ է աշխարհային իշխանութեան միջամտութիւնից: Պետրոսն, ընդհակառակն, ամեն կերպ աշխատում էր սխմել այդ կենդանի ոյժը բիւրօկրատիական մեքենայի շուրջ շրջանակում և դուրս վանել ազատ ոգին ար-